Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<u>Դպրոց՝</u> «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

<u>Թեմա՝</u> Համագործակցային մեթոդի արդյունավետությունը քիմիայի դասավանդման ընթացքում

<u>Վերապատրաստող, մենթոր՝</u> Գ. Ճախինյան

<u>Ուսուցչուհի՝</u> Սաթենիկ Փոքրիկյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն
2. Համագործակցային ուսունցման մեթոդները
3. Փորձարարական մաս
4. Եզրակացություն
5. Գրականության ցանկ

Ներածություն

Համագործակցային ուսուցումն այսօր իրապես կարևոր մոտեցում է ապագա հասարակության մեջ հաջողություն ունենալու համար անհրաժեշտ հմտությունների ձեռք բերման հարցում: Այս մոտեցումը զուտ բովանդակային ուսուցման միջոց չէ, այն նաև արժեքավոր է ինքնին:

Նախ, համագործակցային ուսուցման ընթացքում մենք կարող ենք իրապես կենտրոնանալ միմյանց հետ արդյունավետ և ստեղծագործաբար աշխատել սովորելու վրա (սոցիալական հմտություններ), երկրորդ՝ մտապահելուց զատ համագործակցային ուսուցումը ընդլայնում է նաև տեղեկատվության կիրառման հնարավորությունները (տեղեկատվության մշակման հմտություններ), երրորդ՝ համագործակցային ուսուցման կիրառման դեպքում մենք ստիպված ենք ուրվագծել նպատակներ և կայացնել որոշումներ, որի ընթացքում սովորում ենք մտքեր փոխանակել մեր գործընկերների հետ, ունենալ հետադարձ կապ (ինքնազարգացման հմտություններ), վերջապես համագործակցային ուսուցման պատշաճ կիրառումը կարող է նպաստել ամենատարբեր բովանդակութուն ունեցող նյութերի արդյունավետ սովորելուն:

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է օգտագործվում, որպես աշխատանքային դասավանդման և ուսուցման նոր մոտեցում կամ ռազմավարություն:

Համագործակցային ուսուցումը կենտրոնանում է աշխատանքային հմտությունների գնահատման, քննարկման և բարելավման վրա, ինչը նպաստում է յուրաքանչյուրի մասնակցության ապահովմանը:

Անհրաժեշտություն է առաջացել համագործակցելու, սովորելու և աշխատելու համագործակցորեն:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար: Իմ նպատակն է քիմիայի դասավանդման ընթացքում ուսումնասիրել համագործակցային մեթոդի արդյունավետությունը աշակերտների առաջադիմության վրա:

Համագործակցային ուսուցման գաղափարախոսությունն ու մեթոդները

«Առանց իր անդամների համագործակցության հասարակությունը չի կարող գոյատևել: Մարդկային հասարակությունը գոյատևել է քանի որ նրա անդամների համագործակցությամբ գոյատևումը դարձել է հնարավոր…»

Աշլեյ Մոնտագյու

Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից:

Հազարավոր տարիներ առաջ Թալմուդը պնդում էր հետևյալը. Թալմուդը հասկանալու համար յուրաքանչյուրը պետք է ունենա ուսուցման գործընկեր: Իսկ հին Հռոմեացի Փիլիսոփա Սենեկան պնդում էր, որ սովորեցնողը սովորում է կրկնակի:

17-րդ դարում Կոմենսկին հավատում էր, որ սովորողները շահում են երկու դեպքում էլ, երբ սովորում են ուրիշներից, կամ սովորեցնում են ուրիշին: 1700-ականների Անգլիայում լայնորեն կիրառվում էր սովորողների փոխադարձ ուսուցման գաղափարը:

Հետագայում՝ 1800-ական թվականներին ԱՄՆ -ում հանրային դպրոցների բացմանը զուգընթաց սկսվեց լայնորեն օգտագործվել համագործակցային ուսուցումը:

Ջոն Դյուին լայնորեն տարածում եր սովորողների խմբային աշխատանքի գաղափարը, որպես իր կողմից մշակված «ուսուցման ծրագրային մեթոդի» բաղադրիչ: Մեխանիկական մտապահման և դոգմատիկ կանոնների փոխարեն նա կենտրոնանում է «սովորել

կատարելով» գաղափարի վրա: Ըստ Դյուի ուսուցումը պետք է կենտրոնանա ժողովրդավարական գործընթացների վրա, իսկ դասարանը պետք է արտացոլի ընդհանրական հասարակությունը և դառնա իրական կյանքի լաբորատորիա:

Անցած դարասկզբին Ռուսաստանում նույնպես մեծ էր հետաքրքրությունը այդ մոտեցման նկատմամբ: Հայտնի մանկավարժ, գիտնական Շացկին իր հիմնադրած «Settiement» -ում հիմքում դրեց համագործակցության գաղափար:

1918 թվականին ուկրանիացի հայտնի մանկավարժ Ռիվինը խմբային աշխատանքի շնորհիվ հասավ նրան, որ սովորողները 10 ամսում յուրացրին գիմնազիայի ամբողջ դասընթացը:

ՈՒսուցման խմբային մոտեցումների նկատմամբ հետաքրքրությունը վերածնվեց 1970-80 թվականներին: Կրթության համակարգը մշտապես գործել ու զարգացել է կոնկրետ հասարակական

միջավայրում: Կարևոր է այն հանգամանքը, որ կրթուոյուն համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին: Այսօր դասապրոցեսի արտաքին աշխարհի առնչությունները ավելի ամնիջական են, ինչը նշանակում է , որ անհնար է արդյունավետ դասավանդել առանց հասկանալու և հաշվի առնելու, թե ինչպես է փոփոխվում աշխարհը:

Կրթական համակարգի ներկա բարեփոխումները բխում են հասարակական փոփոխությունների ու զարգացման տրամաբանությունից և միտված են ձևավորելու այնպիսի կրթական համակարգ, որը արդյունավետորեն կծառայի հասարակական պահանջներին: Սոցիալական փոփոխությունների զուգընթաց վերանայվում ու վերաիմաստավորվում են նաև կրթության նպատակները.

1. Ակադեմիական իմացության

2. Մտածողության հմտությունների

3. Սոցիալական հմտությունների

4. Ինքնիմացության և ինքնաճանաչողության հմտությունների զարգացումը:

Հայտնի մասնագետների կարծիքով միմյանց հետ, միմյանցից սովորելը՝ համագործակցային ուսուցում, էլ ավելի մեծ հնարավորություն է ընձեռում ակադեմիական գիտելիքները ընդլայնելու և խորացնելու համար: Մյուս երեք նպատակները այն գործիքներն են, որոնց միջոցով ձեռք են բերվում և նպատակային են կիրառվում ակադեմիական գիտելիքները:

Համագործակցային ուսուցման կարևորագույն հետևանքը անձի զարգացման ու անհատականության ձևավորումն է, քանի որ անհատականությունը ձևավորվում է մարդկանց հետ շփման արդյունքում:

Մարդկանց հետ փոխառնչվելու արդյունքում մենք ավելի լավ ենք հասկանում ինքներս մեզ:

Համագործակցային ուսուցման մեկ այլ դրական արդյունք է կյանքի որակը, քանի որ մարդիկ իրենց կյանքում կարիք ունեն արդյորնավետ փոխհարաբերությունների:

Դրական և աջակցող փոխհարաբերությունները մարդկանց հետ ունեն մեծ ազդեցություն հոգեբանական առողջության վրա:

Սթրեսի հաղթահարման ունակությունը ևս հետևանք է համագործակցային ուսուցման:

Ֆիզիկական առողջության համար ևս նպաստավոր են դրական և աջակցող փոխհարաբերությունները: Ըստ Ջոնսոնների հետազոտությունների համագործակցային ուսուցումը կարելի է կիրառել բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական

դասընթացներում, տնեսական, տարիքային, ազգային միջավայրերում: Համագործակցային ուսուցման արդյունքը՝

1. բարձր առաջադիմությունն է և արդյունավետությունը,
2. ավելի աջակցող և նվիրված հարաբերությունները
3. հեգեբանական առողջության, բանիմացության, ինքնաարժևորման ավելի բարձր աստիճանը

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով: Համագործակցային ուսուցումը դա սովորելն է խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում է ըմբռնելու նյութը: Համագործակցային ուսուցումը ունի նաև հիմնարար առավելություններ: Մղում է աշակերտներին լավ սովորելու, աշակերտների համար ստեղծվում է բարենպաստ միջավայր, որտեղ նրանք կարողանում են արտահայտել իրենց ուժեղ կողմերը: Մարդը ամենաշատը սովորում է սովորեցնելիս: Մյուսը սովորեցնելով ընդունակ աշակերտը ավելի լավ է սովորում: Համագործակցային ուսուցման իմաստն է՝

1. Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ
2. Յուրաքանչյուր անձի դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու

Համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ կան, որոնք ունեն և՛ մնամություններ, և՛ տարբերություններ: Այդ մեթոդներն են՝

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Խմբային հետազոտություն

«Աշակերտների թիմային առաջադմություն» մեթոդը մշակել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսր Ռոբերտ Սլավին: Այս մեթոդը խթանում է համագործակցությունը և մասնակցությունը: Գնահատման այնպիսի համակարգ է կիրառվում, որի ժամանակ աշակերտը շահագրգռված է խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է որ հնարավորություն է տրվում գնահատահելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբին:

«Խճանկար» մեթոդի ժամանակ աշակերտները ծանոթանում է ուսումնական նյութի որոշակի հատվածի ասպեկտի կամ հինախնդրի և ուսուցանում դասընկերներին:

«Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը «Խճանկար»-ի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ: Նաև զարգացնել ինքնուրույն աշխատելու, լսելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու և աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Խմբային հետազոտության մեթոդի դեպքում աշակերտները խմբովի աշխատում են կոնկրետ խնդրի վրա: Այս դեպքում աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգացնու են համագործակցային աշխատանքի հմտություններ:

Դասարան 7-րդ

Թեմա – Քիմիական կապ

Դասի նպատակն է՝

- Իմանա քիմիական կապ և նրա տեսակները
- Հասկանա կապի առաջացման հնարավոր եղանակները

Կարողանա

- Բացատրել քիմիական կապի տեսակները
- Համեմատի կապի տեսակները
- Տարբերի տարբեր քիմիական կապով միացությունները

Նոր նյութի ուսումնասիրության դաս. ներկայացնել քիմիական կապի առաջացնումը ըստ տարրերի ատոմնարերի էլեկտրաբացասականության արժեների: Դիտարկել բոլոր դեպքերը: Դասի բացատրման ժամանակ աշակերտները կկատարեն նշումներ: Ապա բաժանել քարտեր, որոնց վրա կլինեն անհատական առաջադրանքներ և հայտորոշիչ թեստ: Հայտորոշիչ թեստի արդյունքում պարզ դարձավ, որ աշակերտներից 4-ը տվել էին ճիշտ պատասխաններ, 8 աշակերտներ ունեին և՛ ճիշտ, և՛ մեկական սխալ պատասխաններ: 4-ը կիսով չափ սխալ էր պատասխանել, իսկ մնացած 4-ը ունեին ընդամենը մեկական ճիշտ պատասխան:

Առաջին օրվա դասի արդյունքում գրանցում ենք տվյալները և գալիս այն եզրակացության, որ ցածր ածաջադիմությամբ աշակերտները նյութերը լավ չեն յուրացրել և պետք է նախաձեռնել որոշակի քայլեր, որպեսզի բարձրացվի աշակերտների առաջադիմությունը:

Օր 2-րդ. Դասի սկզբում աշակերտներին բաժանել 5 հոգանոց 4 տարրասեռ խմբերի: Նրանցից յուրաքանչյուրին առաջադրել հետևյալ հարցերը.

Խումբ I – ներկայացնել միևնույն էլէկտրաբացասականությամբ տարրերի ատոմների միջև կապի ռաջացումը:

Խումբ II – առաջադրել տարբեր էլեկտրաբացասականությամբ տարրի ատոմների միջև կապի առաջացումը:

Խումբ III – σ կապի առաջացումը

Խումբ IV – ¶ կապի առաջացումը

Արդեն առաջադրանքները խմբերին տալ խաչաձև.

Խումբ I – բերված միացություններից որում է առկա 2¶ կապ՝ N_2, F_2, Cl_2

Խումբ II – Ո՞ր մոլեկուլում է առաջացել σ որում ¶ կապ՝ H_2, O_2, N_2

Խումբ III – Ներկայացված շարքում նշել կապի տեսակները՝ F_2, ZnO, Zn, ZnF_2

Խումբ IV – N-H ատոմների միջև քիմիական կապի ընդհանրացված էլեկտրոնային զույգը դեպի որ ատոմն է տեղաշարժված:

Դասի ավարտին տալ հայտորոշիչ թեստ և ստուգել նյութի յուրացումը: Հիմնվելով արդյունքների վրա կարեի է եզրակացնել, որ դասն ավելի արդյունավետ էր և նկատվում է առաջադիմության աճ:

Օր 3-րդ. Դասն անցկացնել «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդով: Խմբերին առաջարկել պարաստել պլաստիլինե մոդելներ կովալենտ և իոնական կապերով, և պատրաստել պաստառներ: Յուրաքանչյուր խումբ մեկնաբանում է իր պաստառը: Դասն ավարտել հայտորոշիչ թեստի լրացմամբ: Թեստի արդյունքները վկայում են այն մասին, որ կրկին գրանցվել է առաջադիմության աճ:

Եզրակացություն

Ուսուցման բազմազան մեթոդներին տիրապետելը ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից է: Համագործակցային ուսուցումը նպաստում է աշակերտների ինքնուրույն մատծողության զարգացմանը, սովորել սովորելու կարողությանը, աշակերտների միջև փոխադարձ ճիշտ հարաբերությունների ձևավորմանը: Այս և բազմազան հմտություններ օգտագործում ենք ուսումնառության գործընթացում այն դարձնելով արդյունավետ, զուգահեռաբար նրանց մեջ ձևավորելով անհրաժեշտ հմատություններ և կարողություններ:

Գրականություն

1. Վարդումյան, Ա. Հողյաննիսյան, Գ. Վարելլա «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Մասնագիտական զարգացում», Երևան, «Նոյան տապան», հրատ. 2003
2. Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան (2004), «Մասնագիտական զարգացման ձեռնարկ». ԿԱԻ, Երևան:
3. Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ «Համագործակցային ուսումնառություն», 1988թ.